ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

07 հունվարի 2026 թվականի N ՑՊ-001-01/26

ք. Երևան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Թողարկող) 2025 թվականի դեկտեմբերի 22-ին «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Օպերատոր) ներկայացված հայտը և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հայտի լրացումը 10,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 60 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5.50% արժեկտրոնային տոկոսադրույքով, 100,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև Օպերատորի Ցուցակման հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 12-րդ գլխով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Օպերատորի Կանոնների 6-րդ գլխի 29-րդ կետը, 16-րդ գլխի 72-րդ, 79-րդ և 80-րդ կետերը, և, ղեկավարվելով 15-րդ գլխի 68-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.58.-րդ կետի 9.58.5. ենթակետով՝ Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2026 թվականի հունվարի 12-ից ցուցակել և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի 10,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 60 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5.50% արժեկտրոնային տոկոսադրույքով, 100,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ կողմից շնորհվել է **AMACBAB2MER2** ծածկագիրը, միաժամանակ թույլատրել դրանցով հասցեական առևտրի իրականացումը և ռեպո գործարքների կնքումը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված արժեթղթերին շնորհել **ACBABM** հապավումը:

3. Հայտերի (առաջարկների) ներկայացումը և գործարքների վերջնահաշվարկը կատարել ԱՄՆ դոլարով:

4. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:

5. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ֆինանսական տնօրեն,
Կառավարման խորհրդի անդամ,
Գլխավոր տնօրենի լիազորված ներկայացուցիչ՝ **Դավիթ Շահվերդյան**